Բաւական է, ինչքան որ տուժեց հաստատութեան համաբաւը, հերիք է տանջուին մեր ազգային նահատակ հայ վարժապետները անորոշութեան ու պատահականութեան պատճառով. թող բաւական համարուին նաև աշակերտութեան անգիտակցաբար կրած վնասները՝ թէ ըստ բարոյականին և թէ ըստ ուսումնականին։

Մայր Աթոռի ձեմարանի բարեկարգութեան խնդիրն է դրուած մէջտեղ և ով որ ցանկանում է ձեմարանից հայ ժողովրդին ու հայ գիտութեանը օգտակար մարդիկ դուրս եկած տեսնել, պէտք է իւրովանն աշխատի ձեմարանը բարեկարգ վիճակի մէջ դնելու համար։ Այդ է պահանջում թէ Հայոց եկեղեցու, թէ հայ ժողովրդի, թէ հայ հոգևորականութեան և թէ նոյն իսկ ձեմարանի ուսուցիչների և որ գլխաւորն է, աշակերտների շահը։

Երևանց. վարդապետ

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Արձակուրդից Մայր Աթոռ վերադարձան Տ. Տ. Մատթէոս և Արտակ վարդապետները։

Ադուլիսի Թովմա Առաքելոյ վանքի վանահայրութիւնից հրաժարուելով, Մայր Աթոռ վերադարձաւ Տ. Մեսրոպ վարդապետ Մաքսուտեանը։

«Արարատ»ի խմբագիր Տ. Գարեգին վարդապետ Յովսէփեանը Տփխիսի Մայր եկեղեցու երեցփոխանի գրաւոր առաջարկութեան և թեմական առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոսի հեռագրական միջնորդութեան համաձայն, իրաւունք ստացաւ ազգիս Վեհափառ Հայրապետից Տփխիս

մեկնելու, այնտեղ Մեծի պահոց ընթացքում քարոզներ խօսելու համար։ Այժմ Տ. Գարեգին վարդապետը գտնուում է Տփխիսում։

Մեծի պահոց երկրորդ շաբաթուանից սկսուած են Մայր Աթոռի հոգևոր ճեմարանի հարցաքննութիւնները։ Մանկավարժական ժողովը որոշել էր հրապարակական քննութիւն անել բոլոր դասարաններում աւարտական առարկաներից, բայց զինջանելով աշակերտների պահանջին, կրկին ժողով անելով որոշեց հրապարակական քննութիւն անել միայն լսարաններում, վերացնել միւս դասարանների քննութիւնները, իսկ Զ. դասարանի համար բաւականանալ դասարանական քննութիւններով։ Տփխիսից վերադարձել են և արտակարգ քննութիւն են տալիս նաև երկու ամիս առաջ հեռացած աշակերտները։

Քննութիւնների ցուցակը ամեն տարի տպւում էր և բաժանւում միաբաններին, որպէս զի ցանկացողները կարողանային ներկայ գտնուել իրենց ուզած առարկաների քննութեանը։ Այս տարի այդ էլ չարեց ներկայ վարչութիւնը։ Պատճառները մեզ անյայտ են։ Արհամարհանք է այդ դէպի միաբանութիւնը, չկամութիւն թէ մի այլ բան, միևնոյն է. մենք դատապարտում ենք այդպիսի վերաբերմունքը, որ կարող է միայն սառնութիւն և ատելութիւն յառաջ բերել ճեմարանի և միաբանութեան մէջ։

---

† ՄԿՐՏԻՉ ՊԱԼԵԱՆ

(1834—1907)

Ներկայ թուականի յունուար 13-ին կնքեց իւր մահկանացուն Մկրտիչ Պալեանը Երևանում և մեծ շքով թաղուեցաւ։

Հանգուցեալը ծննդեամբ Տրապիզոնից էր, իսկ կրթութիւնը Վենետիկի Մխիթարեանց մօտ ստացել։ Նորա